

**ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ**

**ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ**

**Ստանձնատիպ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հա-  
սարակալկան գիտությունների» ամսագիր,  
1980 № 11**

**Ե Ր Ե Վ Ա Ն — 1 9 8 0**

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

## ՎԻՃԱՐ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս

Սովետական Հայաստանը մեծ Հոկտեմբերի ծնունդն է: Հանրահայտ այս բանաձևումը մեծ խորհուրդ ունի իր մեջ՝ պատմական նշանակության խորհուրդ: Հոկտեմբերի հողմերն էին, որ, մեծ բանաստեղծի խոսքերով ասած, Հայաստան աշխարհին նույնպես տվին «Նրկինք մի մաքուր, արև մի բոսոր»: Հոկտեմբերյան արևի լույսի ու ջերմության տակ հառնեց ու ծաղկեց կործանման անդունդի եզրին կանգնած մեր հինավուրց ևրկիրը, դարձավ ՍՍՀՄ եղբայրական ընտանիքի լիիրավ անդամներից մեկը, բարձր զարգացած արդյունաբերության, ինտենսիվ գյուղատնտեսության և առաջավոր մշակույթի հանրապետություն, որի արդյունաբերական արտադրանքի տասնյակ ու տասնյակ տեսակներ լայն պահանջարկ են առաջացնում նաև զարգացած երկրներում: Հանրապետության տնտեսական զարգացման բուռն վերելքն է վկայում այն փաստը, որ 1913 թ. համեմատությամբ շուրջ 362 անգամ աճել է արդյունաբերության և 7,2 անգամ գյուղատնտեսության համախառն արտադրանքը:

Տնտեսական կյանքի հզոր զարգացումը, քաղաքներում և գյուղերում ծավալված շինարարական լայն աշխատանքները ապահով պայմաններ ստեղծեցին բնակչության աննախընթաց աճի համար. եթե 1920 թ. Սովետական Հայաստանի տարածքում բնակչության թիվը հավասար էր ընդամենը 720 հազ. մարդու, ապա այժմ այն կազմում է 3 միլիոն 80 հազ. մարդ, այսինքն՝ ավելացել է 4,3 անգամ:

Սոցիալ-տնտեսական արմատական վերափոխությունները հիմք ու նախապայման հանդիսացան այն առաջընթացի համար, որի ուղիով տասնամյակ առ տասնամյակ հաստատ քայլեր կատարեց սովետահայ մշակույթը իր բազմաթիվ բնագավառներով: Հասակ առավ և մշտատև վերընթաց ապրեց նաև սովետահայ գիտությունը: Գիտության այդ վերընթացն էլ բավարար է ցույց տալու համար, թե ինչ հեղաշրջիչ դեր խաղաց սովետական իշխանությունը հայ ժողովրդի կյանքում:

Նախասովետական Հայաստանում բացակայում էին կազմակերպված գիտական աշխատանքի պայմանները: Սովետական իշխանությունը Հայաստանում անցյալից շժառանգեց և ոչ մի գիտական հիմնարկ: Հանրապետությունում գիտական մտքի սկզբնավորումն ու զարգացումը նախապես կապված էին Նրևանի պետական համալսարանի հետ: Համալսարանի ամբիոններում էր, որ սովետական իշխանության առաջին տարիներին ծայր առան գիտահետազոտական աշխատանքները: Միաժամանակ 1921 թ. էջմիածնում հիմնադրվեց Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտը, որը լինելով

ակադեմիական տիպի հաստատություն՝ նշանակալից խթան հաղորդեց մանավանդ հասարակական գիտությունների պրոբլեմների մշակմանը:

Հայկական ՍՍՀ-ի գիտական և մշակութային կյանքում նշանակալից երևույթ էր ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ստեղծումը: Այն կազմակերպվեց 1935 թ. և հիմք դարձավ հետագայում Հայկական ՍՍՀ ԳԱ-ի ստեղծման համար: Պատերազմի ծանր օրերին (1943 թ.) վերջինիս կազմակերպման վերաբերյալ սովետական կառավարության ընդունած որոշումը ինքնին վկայում էր անցած տարիներին սովետահայ գիտության ձեռք բերած լուրջ նվաճումների մասին:

Հետպատերազմյան տասնամյակները Հայաստանում գիտական մտքի բուռն զարգացման ժամանակաշրջան էին: Լինելով գիտական մտքի կենտրոնը հանրապետությունում, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան իր 30 գիտահետազոտական հիմնարկներով, որոնք այժմ միավորում են 3007 գիտական աշխատողների, ՀՍՍՀ ԳԱ 38 իսկական անդամների և 50 թղթակից անդամների, նշանակալից ավանդ մուծեց սովետական և համաշխարհային գիտության գանձարանը թե՛ բնական և թե՛ հասարակական գիտությունների զարգացման ուղղությամբ:

Վերջին տասնամյակներին Սովետական Հայաստանի գիտական մտքի զարգացումը խորացել և ծավալվել է գիտության մի շարք նոր ուղղությունների գծով, որոնք ունեն կարևոր տեսական և պրակտիկ նշանակություն: Այդ կապակցությամբ պետք է առանձնապես նշել այն վերելքը, որ մեզ մոտ ապրում են ֆիզիկամաթեմատիկական, քիմիական և տեխնիկական գիտությունները:

Անցած 60 տարիների ընթացքում հայ ժողովուրդը, ինչպես ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում, այնպես էլ գիտության ասպարեզում, հսկայական նվաճումների է հասել: Սակայն կանգ առնենք վերջին հինգ տարիներին մեր գիտության բնագավառի մի քանի ձեռքբերումների և առաջիկա խնդիրների վրա:

10-րդ հնգամյակում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայում գլխավոր ուշադրությունը դարձվել է ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունների հետագա զարգացմանը, արտադրության հետ գիտության կապի ամրապնդմանը, ժողովրդական տնտեսության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումների ներդրմանը: Գիտությունների ակադեմիայի գործունեությունն ավարտվող հնգամյակում ուղղված է եղել հիմնարար նոր ուղղությունների հետագա զարգացման, գիտական հետազոտությունների որակի ու արդյունավետության բարձրացման, ժողովրդատնտեսական առաջնակարգ նշանակություն ունեցող գիտական պրոբլեմների մշակման վերաբերյալ ՍՄԿԿ XXV և ՀԿԿ XXVI համագումարների որոշումների կատարմանը:

Գիտությունների ակադեմիայի նախագահության, նրա բաժանմունքների և ինստիտուտների ուշադրության կենտրոնում են եղել այն հարցերը, որոնք առաջ են քաշվել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության 1978 թ. փետրվարի 23-ի՝ «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունների և զարգացման հեռանկարների մասին» որոշման և ՀԿԿ Կենտկոմի ու ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թ. նոյեմբերի 27-ի՝ «Հայկական ՍՍՀ գիտությունների ակա-

դեմիայի գիտական հետազոտութիւնների հետագա զարգացման և նյութատեխնիկական հիմքի ամրապնդման միջոցառումների մասին» որոշման մեջ: Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական զարգացման, ինչպես նաև սովետական գիտութեան զարգացման խնդիրներին համապատասխան վերանայվել ու ճշտվել են ինստիտուտների գիտական հետազոտութիւնների հիմնական ուղղութիւնները: Իրագործվել են կոնկրետ միջոցառումներ, որոնք նպաստել են գիտութիւնների ակադեմիայի մի շարք ստորաբաժանումների դիտարկագմակերպական վերակառուցմանը և բարելավմանը:

Մենք ակնառու նվաճումների ենք հասել ֆիզիկամաթեմատիկական և ֆիզիկատեխնիկական գիտութիւնների ասպարեզում:

Լենինի շքանշանակիր Բյուրականի աստղադիտարանը հարստացել է 2,6 մ նոր դիտակով, որն իր հզորութեամբ նմանը չունի եվրոպական որևէ երկրում:

Աստղադիտարանը հավատարիմ է մնացել իր նախընտրած գծին՝ ուսումնասիրելով առաջին հերթին ոչ ստացիոնար երևույթները տիեզերքում:

Մեծ աշխատանք է կատարված բռնկվող աստղերի ուսումնասիրութեան գծով: Հայտնաբերված են սովելի քան 200 նոր բռնկվող աստղ աստղակույտերում և աստղասփյուռներում: Հայտնաբերվել են մեծ քանակութեամբ ուլտրամանուշակագույն ավելցուկ ունեցող գալակտիկաներ: Կոմետար միգամածութիւնների ցուցակը մեծապես լրացվել է աստղադիտարանում հայտնաբերված նոր օբյեկտներով: Աստղագետների ընդհանուր ուղադրութեանն արժանացան մեզ մոտ հայտնագործված Հերբիդ-Հարո օբյեկտները: Սկսված են մեծածավալ ինֆրակարմիր դիտումները, որոնց արդյունքները կարող են հիմք ծառայել տիեզերական փոշու առաջացման կարևոր պրոբլեմում գտնելու նոր ուղիներ:

Բյուրականը մասնակցում է արտամթնոլորտային երկու ծրագրերի նախապատրաստմանը:

Մաթեմատիկայի ինստիտուտում ստացված են մի շարք արդյունքներ անալիտիկ ֆունկցիաների տարբեր ոչ լրիվ համակարգերի փակ գծային թաղանթների բնութագրերի մասին: Շարունակվել են հետազոտութիւններն ինստիտուտի գիտական դեմքը բնորոշող այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են՝ մերոմորֆ ֆունկցիաների, ֆակտորիզացիայի և արժեքների բաշխման տեսութիւնները: Կարևոր արդյունքներ են ստացված հոլոմորֆ ֆունկցիաների հանրահաշիվներում բաժանելիութեան հատկութիւնների մասին, ինչպես նաև անալիտիկ ֆունկցիաների տարբեր դասերի միակութեան և լրիվութեան մասին: Ստոխաստիկ երկրաչափութիւնում մշակված են կոմբինատոր մեթոդները և ստացված են այսպես կոչված դիոֆանտյան վերլուծումների ստոխաստիկ անալոզները:

Հաշվողական կենտրոնում լուծված են նույնութեան և բաժանելիութեան պրոբլեմները կիսախմբերում և նույնութեան պրոբլեմն առանց ցիկլերի խումբերում: Մշակված են մաքսիմալ արագութիւն ունեցող ադապտիվ կողավորման համակարգերի կառուցման մեթոդներ:

Այստեղ ես շեմ կարող հատկապես կանգ շահնել ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի նվաճումների վրա, որոնք ձեռք են բերվել այդ ինստիտուտի հիմնադիր, հանգուցյալ ակադեմիկոս էմիլ Միրզաբեկյանի ղեկավարութեամբ:

Այդ ինստիտուտում ստեղծված են մի շարք սարքեր (բեկուաչափ, ֆազաչափ, կորեկոմետր, ամպլիֆազոմետր) էլեկտրամագնիսական ալիքների ընդունման և չափման համար, որոնք գոյություն ունեցողներից տարբերվում են չափման բարձր ճշգրտությամբ: Ուսումնասիրված են սանտիմետրային, միլիմետրային, ենթամիլիմետրային տիրույթում աշխատող քվանտային գեներատորներում և ուժեղացուցիչներում որպես միջավայր օգտագործվող տարբեր նյութերի հատկությունները: Ստեղծված են ուտախի վրա ութ միլիմետրանոց ուժեղացուցիչ և ուրբինի վրա երկհաճախային լայնաշերտ մազեր: Ստեղծված ուժեղացուցիչներն օգտագործվում են ՍՍՀՄ ամենամեծ Ռատան-600 ռադիոդիտակում: Մշակված և պատրաստված են գերբարձր հաճախականության տիրույթում աշխատող բարձր զգայնության ռադիոմետրեր, որոնք օգտագործվում են տիեզերքի ուսումնասիրման ծրագրում: Ստեղծված են ճշգրիտ և մանրածավալ ֆոտոէլեկտրական անկյան փոխակերպիչներ՝ զանազան օբյեկտների տարածական կառավարման համար: Ստեղծված է պատահական ազդանշանների գնահատման ասիմպտոտիկ տեսություն:

Զգալի ճանաչում է գտել ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, որտեղ մշակված է ռեզոնանսի մոտ ատոմների հետ օպտիկական ճառագայթման փոխազդեցության տեսությունը: Ռեզոնանսի մոտ գտնվող համակարգերում ուսումնասիրված են մի շարք նոր բազմաֆոտոնային երևույթներ: Առաջին անգամ դիտված և հետազոտված է լազերային ճառագայթման ազդեցության տակ առաջացող կալիումի և ռութիդիումի գոլորշիների մակրոսկոպիկ մագնիսական մոմենտը: Կիրովականի քիմիական գործարանում ներդրված են երկու նոր ձայնաօպտիկական մոնոբյուրեղներ՝ ալֆայոդային թթու և կապարի մոլիբդատ: Մշակված են յոդաթ-լիթիումի խոշոր բյուրեղների ստեղծման մեթոդիկան, նոր հեռանկարային նյութ ինֆորմացիան գրանցելու համար՝ նիոբաթ-լիթիումը երկաթի հետ: Ներդրված են բյուրեղների աճեցման սարքեր:

Հունգարական ակադեմիայի հետ միատեղ ստեղծված է լույսի պիկավայրկյանային իմպուլսների չափման մեթոդ:

Վերջին տարիների ընթացքում հետաքրքիր աշխատանքներ են կատարված մեխանիկայի ինստիտուտում: Կառուցված է ժառանգական հատկություններով օժտված անհամասեռ ծերացող մարմինների սողքի գծային և ոչ գծային տեսության հիմունքները: Ստեղծված է բարակապատ մարմինների մագնիսաառձգականության տեսություն:

Հատուկ փորձակոնստրուկտորական տեխնոլոգիական ինստիտուտում ստեղծված են զանազան սարքեր սեյսմիկայի ուսումնասիրման, Հայկական ատոմային էլեկտրակայանի, Սախալինի և Անդրբայկալյան կոմպլեքսային գիտահետազոտական ինստիտուտների, ՍՍՀՄ ԳԱ հողի ֆիզիկայի ինստիտուտի, Ադրբեջանի հողի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի և այլ կազմակերպությունների համար:

Հայտնի է, որ մեր հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ մեծ տեղ է գրավում քիմիական արդյունաբերությունը, որով և մասնավորապես պայմանավորված է քիմիական գիտությունների լայն զարգացումը:

Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում ստացված արդյունքները նկատելիորեն փոխում են ածխաջրածինների ու թթվածին պարունակող միացությունների օքսիդացման ու ալյուման մեխանիզմների մասին պատկերացում-

ները և հնարավորություն կտան ածխաջրածինների անմիջական օքսիդացմամբ արժեքավոր նյութեր ստանալու: Ինստիտուտի աշխատանքների հիման վրա կիրովականի բարձրջերմաստիճանային ջեռուցիչների գործարանում ներդրվել է մոլիբդենի երկսիլիցիդի և դրա հիման վրա ջեռուցիչների արտադրման նոր տեխնոլոգիա:

Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում բնական հումքի և արդյունաբերական թափոնների հիման վրա մշակված են հատուկ նշանակության մաքուր նյութերի, օրինակ, բարձր մաքրության սիլիցիումի երկօքսիդի, մոլիբդենի սուլֆիդի (մոլիբդենային քսուկանյութի), պեոլիտի և տարբեր մետաղների մի շարք պարզ ու բարդ սիլիկատներից ջերմամեկուսիչ հատուկ լցոնների բյուրեղային ձևափոխությունների ստացման տեխնոլոգիաներ:

Մոտ Ժամանակում Գոմելի քիմիական կոմբինատում շարք կմտնի թափոնային ֆոսֆոգիպսի մշակման արտադրամաս:

Օրգանական քիմիայի ինստիտուտում մեծարժեք աշխատանքներ են կատարվել օլիգոմերների քիմիայի բնագավառում: Առաջին անգամ աշխարհում իրականացվել է վինիլացետատի օլիգոմերացումը: Օլիգոմերիլացետատի ստացման տեխնոլոգիան ներդրվել է Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանում: Նույն գործարանում ներդրվել են նաև վինիլացետատի արտադրության թափոնների կոմպլեքս մշակման եղանակը և տեխնոլոգիան:

Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում սինթեզվել և բժշկության մեջ են ներդրվել մի քանի պատրաստուկներ՝ պուլֆեմիդը, թիոդինը, էթպենալը, դիմեկոմարոնը, իսկ մի շարք պատրաստուկներ կլինիկական փորձարկում են անցնում: ՍՍՀՄ առողջապահության մինիստրության ֆարմակոմիտեի կլինիկական փորձարկմանն են առաջարկված բիներցին և գումետրօքս պատրաստուկները: Ավարտվում են մի շարք այլ նյութերի փորձնական ուսումնասիրությունները:

Քիթքիմիայի ինստիտուտում անջատվել են պղինձ և ցինկ պարունակող նոր սպիտակուցներ, ուսումնասիրվել դրանց ակտիվ կենտրոնի կառուցվածքը և դերը մետաբոլիզմի պրոցեսներում: Հայտնաբերվել են երկաթ պարունակող նոր սպիտակուցներ, մաքուր վիճակում ստացվել են ադրենոգոքսինը, ադրենօքսին ռեզուկտազը, ցիտոքրոմ P—450-ը, այսինքն՝ հիդրօքսիլացման ամբողջ համակարգը, որը հնարավորություն կտա այդ կարևոր կենսաքիմիական պրոցեսի կինետիկական ուսումնասիրելու և ստերոիդային հորմոններ ստանալու:

Փորձարարական կենսաբանության ինստիտուտում մշակվել է նուկլեազ «S»-ի ստացման եղանակ: Խոշոր եղջերավոր կենդանիների հիպոթալամուսից անջատվել է նոր հեքսապեպտիդ, որն օժտված է կարդիոտրոպային և մետաբոլային ակտիվությամբ: Ստացվել են նեյրոհորմոն «C»-ի քիմիական կառուցվածքի նախնական տվյալները:

Ժողովրդական տնտեսության կարևոր խնդիրների լուծումով են զբաղված մեր երկրաբանները:

Երկրաբանական գիտությունների ինստիտուտում հնգամյա ուսումնասիրությունների հիման վրա կազմված են տարբեր մասշտաբի մասնագիտացված քարտեզներ՝ լիթոլոգիական, կանխատեսումնա-մետաղածնական, տեկտոնական, մագմատիկ և մետամորֆիկ ֆորմացիաների, հրաբուխների և

այլն, ընդ որում, մի շարք նպատակային քարտեզներ հանրապետության տարածքի համար կազմված են առաջին անգամ: Կազմված է հանրապետության կլիմայի ատլասը և ջրային հաշվեկշիռը (բալանսը), կատարված են հատուկ ուսումնասիրություններ «Սևան» ազգային պարկը կազմակերպելու համար: Մշակված են հանքանյութերից մետաղների ուղղակի ստացման նոր մետալուրգիական պրոցեսների հիմունքները:

Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտում կազմակերպված են ռեժիմային դիտարկումներ և հրատարակվում է այդ դիտարկումներին նվիրված բյուլետեն, կազմված են սեյսմական խատենսումնային պոլիգոնների նախագծեր, ուսումնասիրված են երկրաշարժերի նախանշանների ուսումնասիրման պրոբլեմի հիմնական ուղղությունները: Կազմված են մի շարք խոշոր քաղաքների և հիդրոտեխնիկական կառույցների տարածքների սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզները: Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի համար հաշվարկված է տեսական գոլոգրաֆը և մշակված է երկրաշարժերի էպիկենտրոնների կոորդինատների մեքենայական որոշման մեթոդիկան: Մշակված է ուժեղ երկրաշարժերի ինտենսիվության և ազդեցության քանակական գնահատման մեթոդիկան, ինչպես նաև էներգետիկ (ՀԱԿ և հիդրոտեխնիկական) կառույցների մոդելացման մեթոդիկա՝ սեյսմիկ ազդեցության դեպքում: Մետաղային հանքավայրերի ուսումնասիրության տարբեր փուլերում դրանց հեռանկարների գնահատման նպատակով կատարելապործված է երկրաֆիզիկական հետազոտությունների եղանակը և մշակված է ստորգետնյա ու վերգետնյա համալիրային մեթոդիկա:

ՀՍՍՀ ԳԱ համակարգում իրենց ծանրակշիռ տեղն ունեն կենսաբանական գիտությունները:

Բուսաբանության ինստիտուտում արմատատեբևային կոոելյացիայի հետազոտությունների շնորհիվ պարզաբանված է արմատային համակարգի նոր ֆունկցիա: Կազմված է Հայաստանի բուսական աշխարհի հիմնական օգտակար բույսերի քարտեզը՝ հաշվի առնելով ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներում դրանց օգտագործման սրահանջները: Մշակված են էրոզիայի ենթարկված հողերի անտառապատման գիտական հիմունքները և տարբեր հողակլիմայական գոտիներում գտնվող քաղաքների և բնակավայրերի կանաչապատման հարցը:

Կենսաբանության ինստիտուտում մշակված և փորձնականորեն հաստատված է պտղատու տնկիների վտանգավոր վնասատուի՝ խնձորի պտղակերի դեմ պայքարի գենետիկական մեթոդ, որն անվտանգ է բնության և մարդու առողջության համար:

Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում կենտրոնական նյարդային համակարգի ուսումնասիրության բնագավառում պարզաբանված են օրգանիզմի շարժողական ֆունկցիայի վրա ուղեղիկի կարգավորող ազդեցության բջջային մեխանիզմները: Հաստատված է արյան շրջանառությունը կարգավորող մեխանիզմների պարզաբանման համար կարևոր նշանակություն ունեցող արյունաշարժ «կենտրոնի» նեյրոնային շղթայիկի առկայությունը: Ստեղծված է երևանյան ցեղի հավերի բարձր արդյունավետ գիծ, որի տարեկան արտադրողականությունը 220—230 ձու է:

Միկրոբիոլոգիայի ինստիտուտում ընդլայնված են գիտաարտադրական աշխատանքները ընդհանուր և կիրառական միկրոբիոլոգիայի բնագավա-

առում: Արտադրությանն են տրված գյուղատնտեսական մշակույթների վնասատուների դեմ պայքարի միկրոբիոլոգիական պրեպարատներ:

Ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտում մշակված է դեֆիցիտ եթերայուղատու, դեղատու և ներկող բույսերի հիդրոպոնիկական արտադրության սիստեմ:

ԳԱ նախագահության մշտական ուշադրության կենտրոնում են գտնվել նաև հասարակական գիտությունները:

Պատմության ինստիտուտը 10-րդ հնգամյակի տարիներին լույս է ընծայել «Հայ ժողովրդի պատմության» հատորները, տպագրության պատրաստել մնացած երկուսը: «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի ստեղծումը հնարավորություն տվեց ոչ միայն ընդհանրացնել հայ պատմագիտության նվաճումները, այլև բացահայտել նրա այն բնագավառները, որոնք տակավին անբավարար են ուսումնասիրված և կարոտ են լուրջ հետադրության:

Անցյալ հնգամյակի կարևոր իրադարձություններից էր 1978 թ. Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման 150-ամյակի տոնակատարությունը, որը լայնորեն բացահայտեց հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը և ավելի խթանեց մեզ մոտ հայ-ռուսական տնտեսական ու քաղաքական կապերի պատմության ուսումնասիրությունը:

Տնտեսագիտության ինստիտուտի ավարտած հետազոտություններից է «Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ուղղությունների մասին՝ մինչև 1990 թիվը» թեման, ինչպես նաև հանրապետության աշխատանքային ռեսուրսների և դրանց խելացի օգտագործման ուղիների կանխատեսման պրոբլեմի մշակումը:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կատարած պեղումների շնորհիվ հայտնաբերված նոր նյութերը հարստացրին մեր պատկերացումները հին Հայաստանի, մասնավորապես մ. թ. ա. VI—I դդ. նյութական ու հոգևոր մշակույթի մասին: Ուշադրության արժանի են Հայաստանի հնագիտության, ազգագրության և բանահյուսությանը նվիրված մատենաշարերը, որոնց հրատարակությունը շարունակվում է:

Արևելագիտության ինստիտուտը հաջողությամբ շարունակել է Մերձավոր ու Միջին արևելքի պատմության ու մշակույթի տարբեր հարցերի ուսումնասիրությունը և հրապարակել այդ հարցերին նվիրված արժեքավոր աշխատություններ:

Փիլիսոփայության ինստիտուտում հետազոտվել են մատերիալիստական դիալեկտիկայի տեսության, բնագիտության մեթոդաբանության, հասուն սոցիալիզմի զարգացման հարցերը, որոնք արտացոլում են գտել «Ժամանակակից բնագիտության փիլիսոփայական հարցերը», «Գիտելիքի վերլուծության հարցեր», «Մաթեմատիկական ապացուցման մասին», «Սոցիալիզմը և մարդու իրավունքները» և այլ աշխատություններում: Մեր փիլիսոփաները մեծ ներդրում կատարեցին Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակը արժանվույնս նախապատրաստելու և անցկացնելու մեջ:

Լեզվի ինստիտուտը զգալի արդյունքների է հասել հայոց լեզվի կառուցվածքի, նրա սլաոմության և զարգացման օրինաչափությունների հետազոտության բնագավառներում: Ինստիտուտի կարևորագույն նվաճումներից են

«Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր ակադեմիական քերականությունը և քառահատոր «Ժամանակակից հայերենի բացատրական բառարան» աշխատությունները: Գրականության ինստիտուտը հրատարակել է «Հայ նոր գրականության պատմության» հինգհատորյակը, որն ընդգրկում է բազմադարյան մեր գրականության շուրջ 200-ամյա ժամանակաշրջանի առավել խոր ու լայնահայաց ուսումնասիրությունը: Ինստիտուտը պատրաստել է նաև մի շարք կոլեկտիվ մենագրություններ՝ նվիրված գրականության տեսության և սովետահայ գրականության պատմության խնդիրներին:

Արվեստի ինստիտուտի կարևոր գործերից է «Հայ ճարտարապետության հուշարձանների» տասը գրքով շարքի հրատարակությունը հայերեն, անգլերեն և իտալերեն լեզուներով, որն իրականացվել է Միլանի պոլիտեխնիկումի (Իտալիա) ճարտարապետական խմբի գործուն մասնակցությամբ: Բարձր մակարդակով անցավ հայ մշակույթին նվիրված միջազգային երկրորդ նըստաշրջանը, որը տեղի ունեցավ 1978 թ. Երևանում:

Հասարակական գիտությունների գծով 11-րդ հնգամյակում նախատեսվում է մշակել այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ դարգացած սոցիալիզմի տնտեսական ու սոցիալական պրոբլեմները և կոմունիզմի վերաճելու օրինաչափությունները, հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները և ռեզիոնալ սոցիալական հարցերի լուծումը, տնտեսական երկարատև կանխատեսության և արտադրողական ուժերի օպտիմալ կանխատեսության պրոբլեմները, հայ ժողովրդի նյութական մշակույթի, լեզվի ու գրականության հարցերի հետազոտությունը: Հնգամյակի կարևորագույն թեմաներից են «Հայ ժողովրդի պատմության» ուսերեն լեզվով պատրաստվող քառահատորյակի և «Հայաստանի քաղաքների ու գյուղերի պատմության» գրքերի շարքի պատրաստումն ու հրատարակությունը:

Վերևում բերված օրինակներից երևում է, որ 10-րդ հնգամյակի ընթացքում զգալի աշխատանք է կատարվել հանրապետությունում գիտության զարգացման ուղղությամբ: Բարձրացել է գիտական աշխատանքների մակարդակը: Ավելին՝ նոր հաջողություններ են ձեռք բերվել ակադեմիայի հիմնադրման օրվանից անցկացվող գիտական քաղաքականության այն սկզբունքի իրականացման մեջ, որ ամեն մի գիտական հիմնարկ, ինչպես նաև հանրապետության գիտությունների ակադեմիան ամբողջությամբ պետք է ունենան իրենց գիտական դեմֆը և իրենց ընտրած ուղղություններում հասնեն հետազոտությունների ամենաբարձր մակարդակի:

Սակայն, շնայած զգալի առաջընթացին, այս հարցում կան նաև թերություններ: Դեռ շատ են մանր թեմաները: Փոխանակ ուժերը կենտրոնացնելու բարդ և դժվար խնդիրների լուծման վրա, որոշ օղակներում գերադասում են զբաղվել թեթև աշխատանքներով: Այս թերությունը պետք է վերացվի: Ուրեմն մեր խնդիրն է շարունակել մեր գիտական քաղաքականության հիմնական գիծը: 11-րդ հնգամյակում մենք պետք է աշխատենք ավելի դժվար և ծավալուն խնդիրների վրա, կազմելով ավելի խոշոր պրոբլեմների մշակման հատուկ, մտածված ծրագրեր:

Վերջում պետք է նշել, որ 10-րդ հնգամյակում մեր ակադեմիայում տեղի ունեցած բարեփոխությունները, ստացված հաջողությունները անհնարին կլինեին, եթե մենք այս հինգ տարիների ընթացքում շատանայինք ՀԿԿ կենտրոնի, Հայաստանի կառավարության անմիջական օգնությունը:

Ամիսներ են մնացել մինչև ՍՄԿԿ XXVI համագումարի բացումը: Մեր կուսակցության ինչպես բոլոր, այնպես էլ այս համագումարը, անկասկած, նոր խնդիրներ կդնի նաև գիտության աշխատողներին առաջ: Կիահույս ենք, որ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, նրա բաժանմունքներն ու ինստիտուտները իրենց բոլոր ջանքերը կգործադրեն պատվով կատարելու այդ խնդիրները:

## НАУКА НА ПУТЯХ БУРНОГО РАЗВИТИЯ

ВИКТОР АМБАРЦУМЯН

Президент АН Арм. ССР, академик

### Резюме

Годы Советской власти—это период становления и развития советской армянской науки. Основой развития науки послужили большие социально-экономические преобразования, происшедшие в республике. В 1921 г. в Эчмиадзине был основан Институт науки и искусства Армении, который вместе с Ереванским государственным университетом стал очагом становления и дальнейшего развития научной мысли республики. В 1935 г. был организован Армянский филиал АН СССР, на базе которого в 1943 г. была создана Академия наук Арм.ССР.

В системе АН Арм.ССР ныне функционирует тридцать научно-исследовательских институтов, объединяющих более трех тысяч научных сотрудников. Академия наук Арм.ССР внесла большой вклад в развитие советской науки. Ряд исследований, проводившихся в институтах АН Арм. ССР, приобрел большое теоретическое и практическое значение. Ведущими направлениями научной мысли АН Арм.ССР ныне являются физико-математические, технические и химические науки. Уделяется большое внимание дальнейшему расширению исследований в области общественных наук.